# Ավարտական հետազոտական աշխատանք

*Թեմա՝* «Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կարգավորման անհրաժշտությունը «Կերպարվեստի» մեթոդիկայի ուսուցման գործում»

*Հաստատությունը՝* ՀՈԱԿ. N37 մսուր-մանկապարտեզ

*Դաստիարակ՝* Դավիդյան Անահիտ

*Ղեկավար՝* Ավետիսյան Ժաննա

Երևան2022

## Ներածություն

Գեղագիտական դաստիարակությունը սկսվում է նախադպրոցական տարիքից՝ իր առջև խնդիր դնելով ակտիվացնել երեխաների շփումը արվեստի հետ, որի գեղեցկությունը կարող է նկատել և հասկանալ նաև նախադպրոցական տարիքի երեխան:

Այն ենթադրում է՝ երեխայի ընկալման, երևակայության, զգացմունքների հետաքրքրությունների, ունակությունների և հսկումների զարգացում, հիշո-ղության ձևավորում:

Երեխան ընկալում է աշխարհը՝ տպավորությունների և կերպարների միջոցով:

Կերպարվեստը բացահայտում է նախադպրոցական երեխայի ընդհու-նակությունները և ձևավորում անձնային կարևոր որակներ: Այն պետք է ուղղված լինի երեխայի՝ ստեղծագործելու ցանկությունն արթնացնելու և ստեղծագործական ունակությունների զարգացման:

***Թեման՝*** **«Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կարգավորման անհրաժշտությունը «Կերպարվեստի» մեթոդիկայի ուսուցման գործում»**

**Կերպարվեստ**

Կերպարվեստը երեխայի կյանքում ունի հատուկ դեր ու նշանակություն: Իր մեջ ներառվում է նկարչությունը, ծեփակերտումը, դեկորատիվ կիրառական արվեստը, կառուցողական /կոնստրուկտավորման/ աշխատանքները և հանդիսանում է նախադպրոցականի սիրելի գործունեության ձևը: Այն հնարավորություն է ստեղծում ընդլայնելու և շրջապատի մասին իրենց պատկերացումները արտահայտելու համար, ինչպես նաև նպաստում է նրանց գեղագիտական, բարոյական, աշխատանքային և մտավոր դաստիարակության զարգացմանը: Երեխայի դաստիարակչական գործընթացում նշանակալից է կերպարվեստը: Այսօր գոյություն ունեն նկարելու, ծեփակերտելու և դեկորատիվ բնույթի աշխատանքների ստեղծման համար հաջող մշակված ծրագրեր, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ: Իրականացնելով կերպարվեստի ծրագրային պահանջները երեխաները կյուրացնեն գիտելիքներ գեղարվեստական գործունեության տարբեր ունակություններ և հմտություններ: Նկարելու, ծեփելու և դեկորատիվ աշխատանքների հ նարների յուրացման հետ միաժամանակ երեխաների գեղարվեստա-կիրառական փորձը բնութագրվում է գործնական նշանակությամբ, որը արտահայտվում է ինքնատիպ ձևով: Կերպարվեստը երեխային պարգևում է ուրախություն: Նա ուրախանում է, երբ իր ձեռքերով պատրաստած իրերը նվիրում է դաստիարակին, մայրիկին, կամ երբ պատրաստված զարդերով կամ նկարչական աշխատանքներով զարդարվում է խմբասենյակը: Երեխաները ներգրավվում են ստեղծագործական աշխատանքի մեջ սիրով: Նկարելիս կամ տարբեր իրեր պատրաստելիս՝ երեխաները ստեղծում են տարբեր հորինվածքներ, համադրում գույները, կամ օգտվելով բնօրինակից՝ համեմատելով փորձում են ստեղծել առավելագույնս նման պատկեր:: Նրանք ուսումնասիրում են առարկայի արտաքին տեսքը, դիտում են, զննում, շոշափում, ձեռք են բերում առարկայի ձևը զգալու և այն հաղորդելու կարողություն և հմտություն: Կերպարվեստային գործունեությամբ՝ նկարչությամբ, ծեփով, երեխաները հնարավորություն են ունենում արտահայտելու իրենց ընկալումները, հուզական վերաբերմունքը շրջապատի առարկաների և երևույթների նկատմամբ:

Քանի որ երեխաները տարբերվում են իրենց ֆիզիկական հնարավորություններով, դաստիարակի խնդիրն է իմանալ նրանց անհատական կարողությունները և դասավորել սեղանները այնպես, որ նրանցից յուրաքանչյուրը լինի դաստիարակի տեսադաշտում և ցուցադրվող նյութը բոլորին լավ տեսանելի լինի: Երեխաները կարող են լինել ցածրահասակ կամ բարձրահասակ, տեսողության խնդիրներ ունեցողներներ, ձախլիկներ: Անհրաժեշտ է երեխաներին նստեցնել ցածրահասակից հաջորդաբար մինչև բարձրահասակ այնպես, որ նրանք չխանգարեն միմյանց ներկայացված նյութը ուսումնասիրելիս: Թույլ տեսողությամբ երեխաներին նույնպես հարկավոր է նստեցնել համեմատաբար մոտ ցուցադրվող նյութին, իսկ ինչ վերաբերում է ձախլիկներին, ապա անհրաժեշտ է որ լուսավորությունը լինի նրանց ձախ կողմից, քանի որ այդպես առավել նպատակահարմար է նոր նյութի յուրացման համար:

Նկարչության ժամանակ մանկավարժը ներկայացնում է տարբեր հասկացություններ՝ բնանկար, դիմանկար, նատյուրմորտ, գծանկար, անիմալիստական ժանր, ծանոթացնում է համաշխարհային ստեղծագործություններին, բնության երևույթներին:

Նկարչությունը /գծանկարչությունը, գեղանկարչությունը/ գծերի և գույների միջոցով առարկաների և երևույթների պատկերումն է, որի հիմքն են կազմում՝ գրաֆիկակակն պատկերումը, երանգավորումը, ձևը և կոմպոզիցիան/հորինվածք/: Այն հարթության վրա որևէ առարկայի կամ երևույթի պատկերման արվեստ է: Գծի և գույնի միջոցով հնարավոր է վերարտադրել առարկայի ձևը, կառուցվածքը, ծավալը, նյութականությունը, գույնը և տարածության մեջ դրանց դիրքը: Ասվածը բնօրինակից պատկերմանը հավատարիմ ձևն է: Առաչկայի իրական ու արտահայտիչ ձևի պատկերման համար բնավ բավական չեն արտաքին, տեսանելի դիտարկումներն ու վերլուծությունները: Առավել ամբողջական պատկերացումներ ձևավորելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև բնօրինակի ներքին կառուցվածքը: Իզուր չէ, որ հայտնի նկարիչ, քանդակագործ Միքելանջելոն, Լեոնարդո Դա Վինչին գաղտնի պայմաններում ուսումնասիրում էր մարդու կառուցվածքը, ամենայն մանրամասներով ծանոթանալով նույնիսկ ամենաչնչին մանրուքներին: Կերպարվեստի դասերը նպատակ են հետապնդում երեխաներին հաղորդելու իրատեսական արվեստի տարրերը, որոնք էլ նպաստում են նրա ստեղծագործական կարողությունների ընդլայնմանը և բազմակողմանի զարգացմանը: Բնօրինակից նկարելու կարողությունը զարգացնում է երեխայի հոգեկան գործընթացները: Հիշողությամբ և երևակայությամբ ստեղծված առաջադրանքները ակտիվացնում են տեսողական զգացողությունը: Երեխաները կարողանում են առանձնացնել առարկաների ծավալը, դրանց դիրքը տարածության մեջ և խորհել գունային լուծումների շուրջ: Նրանց մեջ դաստիարակում են գեղարվեստական ճաշակը, կարգապահությունը, կայունությունը: Ինքնուրույնություն աշխատանքով արթնանում է հետաքրքրությունը և սերը կերպարվեստի հանդեպ: Կերպարվեստը ճանաչողական նշանակություն ունեցող գործընթաց է:

Ձննելով առարկան՝ երեխաները պետք է կարողանան նկարի մեջ պատկերել դրա բնորոշ հատկությունները, ստեղծել գեղարվեստական կերպարը, արտացոլել սյուժեն, սովորել նախշի մի քանի տարրերը՝ աստիճանաբար ձեռք բերելով նկարելու տեխնիկայի նախնական հմտությունները: Նկարչությունը հնարավորություն է ընձեռում նաևպատկերի մեջ արտահայտել առարկայի կամ երևույթի բնորոշ հատկանիշները, գույները, գուներանգները, կերպարներում գեղարվեստորեն տեսածը և զգացածը: Երեխաների մոտ նոր պատկերացումներ են ձևավորվում նոր գույների ստացման վերաբերյալ՝ հիմնական, սառը և տաք գույների և գուներանգների մասին: Նրանք ծանոթանում են և տարբերակում հակադիր գույները, աստիճանաբար կարող են ստանալ մի քանի բաց գույն՝ պահպանելով մեկ գույնից մյուսի ստացման տեխնիկան: Նկարչության ընթացքում երեխայի մոտ ձևավորվում և զարգանում է մանր մոտորիկան, որը նրան նախապատրաստում է գրիչով աշխատելուն՝ գրելուն:

Նկարչության ցանկացած դասի ժամանակ մանկավարժը առաջնորդվում է ըստ ծրագրով որոշված թեմատիկայի՝ կապված եղանակից, մոտեցող ազգային կամ միջազգային տոնից և այլն: Սակայն ամեն ոք ունի իր դասավանդման մեթոդները՝ նյութի մատուցում, երեխաների վերահսկում, ուսուցանում:

Երեխաները սիրում են նկարչության պարապմունքները և հիմնականում աշխատում են մեծ խանդավառությամբ: Դասի ընթացքում դաստիարակը կարող է կազմակերպել փոքրիկ ընդմիջումներ խաղի տեսքով, հանելուկներ, շուտասելուկներ, թեմայի շրջանակներում:

Կերպարվեստը երեխայի կյանքում ունի հատուկ դեր ու նշանակություն: Իր մեջ ներառվում է նկարչությունը, ծեփակերտումը, դեկորատիվ կիրառական արվեստը, կառուցողական/կոնստրուկտավորման/ աշխատանքները և հանդիսանում է նախադպրոցականի սիրելի գործունեության ձևը: Այն հնարավորություն է ստեղծում ընդլայնելու և շրջապատի մասին իրենց պատկերացումները արտահայտելու համար, ինչպես նաև նպաստում է նրանց գեղագիտական, բարոյական, աշխատանքային և մտավոր դաստիարակության զարգացմանը: Երեխայի դաստիարակչական գործընթացում նշանակալից է կերպարվեստը: Այսօր գոյություն ունեն նկարելու, ծեփակերտելու և դեկորատիվ բնույթի աշխատանքների ստեղծման համար հաջող մշակված ծրագրեր, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ: Իրականացնելով կերպարվեստի ծրագրային պահանջները երեխաները կյուրացնեն գիտելիքներ գեղարվեստական գործունեության տարբեր ունակություններ և հմտություններ: Նկարելու, ծեփելու և դեկորատիվ աշխատանքների հնարների յուրացման հետ միաժամանակ երեխաների գեղարվեստա-կիրառական փորձը բնութագրվում է գործնական նշանակությամբ,

որը արտահայտվում է ինքնատիպ ձևով: Կերպարվեստը երեխային պարգևում է ուրախություն: Նա ուրախանում է, երբ իր ձեռքերով պատրաստած իրերը նվիրում է դաստիարակին, մայրիկին, կամ երբ պատրաստված զարդերով կամ նկարչական աշխատանքներով զարդարվում է խմբասենյակը: Երեխաները ներգրավվում են ստեղծագործական աշխատանքի մեջ սիրով: Նկարելիս կամ տարբեր իրեր պատրաստելիս՝ երեխաները ստեղծում են տարբեր հորինվածքներ, համադրում գույները, կամ օգտվելով բնօրինակից՝ համեմատելով փորձում են ստեղծել առավելագույնս նման պատկեր:

**Ծեփակերտում**

Ծեփակերտման միջոցով կարելի է ծեփանյութից ստանալ ծավալ ունեցող առարկաներ և հարթապատկերներ: Որպես ծեփանյութ կարող են հանդես գալ՝ պլաստիլինը, աղի խմորը, կավը և ցանկացած ճկուն էկոլոգիապես մաքուր նյութ, որից հնարավոր է ծեփել: Բացի այդ, որպես ծեփանյութ ձմռանը կարելի է օգտագործել ձյունը, իսկ ամռանը՝ խոնավ ավազը: Ծեփակերտման գործընթացը կարող է կազմակերպվել ինչպես պարապմունքներին, այնպես էլ ազատ ժամանակ: Պարապմունքի ընթացքում դաստիարակը պետք է անընդհատ լինի երեխաների մոտ, հուշի անվտանգու- թյան կանոնները, սովորեցնի պարապմունքից հոտո հավաքել ավելացած ծե- փանյութը, այն դնել դրա համար հատուկ հարմարեցված տեղում: Հարկավոր է ձևավորել ինքնասպասարկման տարրական կարողություններ՝ ծեփոլուց հետո մաքրել ձեռքերը լաթով, այնուհետև լվանալ հոսող ջրի տակ, պատրաստի աշխատանքները տեղադրել մեծ տակդիրի վրա: Ցանկալի է, որ այն պտտվելու հնարավորություն ունենա:

Ծեփի օգնությամբ երեխաների մոտ դարձյալ զարգանում է մանր մոտորիկան, կենտրոնանում ուշադրությունը, հմտանում շարժումները: Պարապմունքի ընթացքում նրանք կարող են ինչպես բնօրինակից ելնելով, այնպես էլ դաստիարակի առաջարկածին և նկարագրածին համապատասխան մի որևէ իր պատրաստել: Խմորե իրերը պատրաստելուց հետո երեխաները կարող են գուաշով գունազարդել, զարդարել տարբեր կենցաղային անվնաս նյութերով (թելեր, բամբակ, մակարոնեղեն, ընդեղեն):

*Ծեփակերտման* դասերը երեխաներին հնարավորություն են տալիս ծանոթացնել ծեփվող նյութերի տեսակներին և հատկություններին: նրանք տեսնում և հասկանում են, թե ինչպես կարելի է փոխել առարկայի արտաքին ձևը, չափը տեսքը: Անհրաժեշտ է նախօրոք պատրաստել անհրաժեշտ պարագաները՝ տակդիր, ծեփաձողիկ, ձեթոտ կտոր: Երեխաները դասի ընթացքում կարող են պատրաստել մի քանի մարմին: Դաստիարակը դիդակտիկ նյութերը ցուցադրելուց բացի երեխաներին կարող է առաջարկել սյուժե, որին համապատասխան երևակայությամբ և հիշողությամբ նրանք կպատրաստեն իրենց պատկերացրած կոմպոզիցիան: Դասի ընթացքում առաջարկվում է նաև շոշափել ցուցադրվող իրը:


Գնդի ձևափոխումները

**Կառուցողական**

Կառուցողական անվանումը ծագել է լատիներեն «constructio» բառից, որը նշանակում է կառույց: Կառուցողական աշխատանքները նախադպրոցական տարիքում ենթադրում են՝ գործունեություն, որի ընթացքում ստեղծվում են տարբեր նյութերից՝ մանկական շինանյութ , կոնստրուկտոր, թուղթ, ստվարաթուղթ, բնական նյութեր, բազմազն խաղային շինանյութեր: Երեխայի կառուցողական գործունեությունը անչափ մոտ է մեծահասակ գեղար-վեստատեխնիկական գործունեությանը: Չնայած մանկական շինությունները չունեն հասարակական նշանակություն, և երեխան չի կարող կատարել նորարարություն , սակայն գործունեության այս ձևը հսկայական նշանակություն ունի երեխայի աշխատանքային դաստիարակության վրա: Այս պարագայում կարևորվում դաստիարակի մասնակցությունը կառուցողական գործունեության զարգացման գործընթացը:

Կառուցողական գործունեությունը նախադպրոցական տարիքում կրում է դերային խաղի կառույցը ստեղծելու ընթացքում երեխաները ներգրավվում են խաղային հարաբերությունների մեջ: Նրանք ոչ միայն բաժանում են յուրաքանչյուրի պարտականությունները, այլև կատարում այս կամ այն դերը: Այդ իսկ պատճառով կառուցողական գործունեությունն անվանվում է շինարարական խաղ:

Շինությունները երեխաները պետք է տարբերեն ըստ գույների, նման մոտեցումը հնարավորություն է տալիս արագ առանձնացնել կառույցի դետալները ինքնուրույն աշխատանքի համար: Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ երեխաներին մղել դեպի ճշգրիտ կառուցումը : Օրինակ՝ եթե խորանարդները կամ աղյուսները շարում ենք հորիզոնական կամ ուղղահայաց դիրքով, ապա պետք է հետևել, որպեսզի դրանց կողմերը կազմեն ուղիղ գիծ և ոչ մի դետալ հետ ու առաջ չլինի: Նման մոտեցումը նպաստում է ձեռքի դաստակի և մատների կորդինացիայի զարգացմանը: Ընդ որում դաստիարակը երբեմն առաջարկում է երեխային ինքնուրույն մատիկներով ստուգել, թե ինչպես են շարված դետալները, միասին ուրախանալ երեխայի հաջողությամբ, խրախուսել նրա ձգտումները կամ լավ աշխատանքը: Դաստիարակը սովորեցնում է գտնել նմանություններ իրենց շինանյութից կառուցած շինության և շրջապատում գտնվող ծանոթ առարկաների միջև, առաջարկում դրանք անվանել:

Կառույցները, որոնց միջոցով տեղի է ունենում ուսուցման գործընթացը պետք է լինեն պարզ, հնարավորություն տան երեխաներին հիշել կառուցման քայլաշարը, յուրացնեն կառուցման տեխնիկան, կարողանան այն օգտագործել սյուժետային խաղերում: Այս տարիքային խմբի շինարարական նյութերը /երկրաչափական մարմինները/ ըստ ձևի ցանկալի է ունենան տարբեր գույներ:

Աշխատանքի ընթացքում և ավարտին դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է գույների ներդաշնակությանը՝ տնակի պատերը դեղին են, տանիքը կապույտ և այլն: Կամ բազմոցի նստատեղի համար օգտագործվել են միայն կարմիր խարոռանարդներ, իսկ մեջքատողի համար՝ դեղին աղյուսներ: Պարապմունքներին ցանկալի է օգտագործել չափերին համապատասխան, որպիսի երեխաների մեջ ցանկություն արթնանա կառույցով խաղալու:

**Ապլիկացիա**

Ապլիկացիան ստեղծագործելու մի տեսակ է, որը շատ օգտակար է վաղ տարիքի երեխայի համար: Փոքրիկները կտրատել և սեսնձել թղթի տարբեր կտորներ: Առաջին հերթին ապլիկացիան ազդում է փոքրիկի ընդհանուր զարգացվածոիթյան վրա: Նա իմանում է թե ինչպիսին են լինում գույները և ֆիգուրները, ճանաչում է աշխարհը, զարգացնում ստեղծագործական հմտությունները և մատների մոտորիկան: Կարևոր է գործընթացի բնույթը: Ապլի-կացիան կօգնի զարգացնել երեխայի հաղորդակցության հմտությունները, քանի որ փոքրիկը շփվում է ծնողների, հասակակիցների հետ, եթե նրանք նույնպես մասնակցում են այդ գործընթացին:

Ապլիկացիան օգնում է զարգացնել մտածողությունը, ֆանտազիան: Փոքրիկը հենց ինքը կարող է հորինել հեքիաթային ծառ կամ յուրահատուկ ավտոմեքենա:

**Պարապմունք**

Տարիքը՝ 3-6 տարեկան

**Նպատակը**

- Ակտիվացնել երեխայի շոշափելիքի զգայարանը:
- Օգնել՝ հայտնաբերելու նոր գույներ ստանալու գաղտնիքները:
- Զարգացնել հաղորդակցվելու ունակությունը:

**Օգտագործվող նյութեր ու միջոցներ՝**

1. Նկատելու համար վացվող մաքուր մակերես /սեղան/,
2. Երեք ներկատեսակ /ցանկալի է՝ կապույտ, դեղին, կարմիր/,

3. Գունավոր կպչուն ժապավեն,
4. Արտահագուստ /գոգնոց/

**Նախապատրաստական աշխատանք**

Սեղանի մակերեսը գունավոր կպչուն ժապավենով բաժանել 4 հավասար հատվածների: Սեղանի մի կողմում կանգնեցնել երեխաներից երկուսին՝ նրանց տալով նույն գույնի ներկ, իսկ հակառակ կողմում կանգնած մյուս երկուսին՝ տալ այլ գույնի ներկ:

**Ընթացքը**

Երեխաներին թույլ է տրվել նկարել: Նրանց հարկավոր է հայտնել, որ իրենք կատարում են գիտական փորձ: Միաժամանակ պետք է բացատրել, որ սկզբում մատնանկարելու են ժապավենով առանձնացված իրենց հատվածում: Յուրաքանչյուրին ցույց է տրվում իր տարածքը և ներկը: Եթե երեխան խնդրի այլ գույն, ապա նրան կարելի է բացատրել, որ քիչ հետո հնարավորություն կունենա նկարելու նաև այլ գույնով: Հիմա պետք է նկարի իրեն տրված գունով:

Երբ նկատեք, որ երեխան սկսում է ձանձրանալ մեկ գույնով աշխատելիս, հանե՛ք գունավոր ժապավենը, ազատե՛ք նրան տարածական սահմանափակումներից և թու՛յլ տվեք նկարել ցանկացած գունով:

Գունները նախապես խառնելով և միասին աշխատելով՝ երեխաները կտեսնես, թե ինչպես են փոխվում դրանք: Նրանք են, որ գույները խառնելիս ի հայտ են գալիս նոր երանգներ: Սկսում են զրուցել, հաղորդակցվել միմյանց հետ և կիսել մատնանկարչության պատճառած հրճվանքը: Աշխատանքի վերջում պետք է հարցնել, թե ի՞նչ կատարվեց գույների հետ, ապա բացատրել, որ բոլոր գույներն ստացվում են հիմնական՝ կարմիր, կապույտ, դեղին գույների խառնուրդից:

**Արտատպում**

Ստացված պատկերն արտատպելու նպատակով հարկավոր է մաքուր սպիտակ թուղթը փռել ներկված մակերեսի վրա, նրբորեն սեղմել այն և զգուշորեն բարձրացնել: Կստացվի արտատպված հետաքրքիր պատկեր:

Հասանք նպատակին:

**Եզրակացություն**

Պարապմունքները ավելի հաջող կլինեն, եթե մանկապարտեզն ունենա համապատասխան խմբասեյնակ, որը նախատեսված կլինի կերպարվեստային աշխատանքների համար:

**Գրականությունը**

Համացանց

Նախաշավիղներ

Լ.Սմբատյան, Լ.Վերդյան, Լ.Սարգսյան «Կերպարվեստային պարապմունքներ»